

ՀԱՎՈՐ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ. ԴԻՄԱԳԻԾ և ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ³⁷

Նոնա Դավթյան

Բանալի բառեր՝ տարեգրություն, եռագրություն, Կարոտի գրականություն, վերհուշ, լեզվի նահանջ, ազգային նկարագիր, կորուստների ցավ, գաղափարական հարցադրում:

Վաթսուականներին ամերիկահայ արձակուրդ կայուն իր տեղն է զբաղեցնում Հակոբ Ասատուրյանը: Արձակագիր, երաժշտագետ Հ. Ասատուրյանը ծնվել է 1903-ին Կեսարիայի Չոմախլու գյուղում: Գրաձանաչություն սովորել է գյուղի խրիմյան վարժարանում: 1915-ին կորցնում է հորը, իսկ ընտանիքը բռնում է աքսորի ճանապարհը: Ճանապարհին կորցնում է զրեթե բոլոր հարազատներին: 1915-ին այլևս որք Հակոբը դառնում է Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի սան: Օժտված էր նաև երգելու շնորհով, սիրում էր կատարել Սայաթ-Նովայի և Կոմիտասի երգերը: Գրական ասպարեզ է իջել նախ որպես բանաստեղծ՝ «Նոր գիր» գրական հանդեսում հրատարակելով գրական առաջին փորձերը, որոնք հետագայում՝ 1946-ին «Անդաստանե խորագրով, հրատարակվում են Բոստոնում: Անցում կատարելով արձակին, Ասատուրյանը 1965-ին ընթերցողի սեղանին է դնում հայրենի Չոմախլուի, իր ու իր շեն գերդաստանի տարեգրությունը՝ գեղարվեստական ուժով: «Հովակիմի թռչները վեպը հրատարակվում է Բեյրութում, այնուհետև ավելի ուշ՝ 1974-ին Երևանում, որին որպես տրամաբանական շարունակություն հետևելու են «Հովակիմի թռչնորդիները» (1982, Բեյրութ) և «So՛, լա՛ճ տնաւեր» (1986, Բեյրութ) վեպերը:

Ծննդավայրի պատկերները, մարդկային խեղված ձակատագրերը, կյանքն ընդհանրապես իր թնջուկով «կապույտ» թռչունին հետամուտ գրողին կանգնեցնում են նման հանձնառության առջև: Հայրենի գրականագետ Ս. Արզումանյանը նկատում է. «Գեղարվեստական ստեղծագործությամբ հեղինակն ասում է ոչ միայն իր «անձնական ճշմարտությունը, այլև կյանքի...» [1], և «նյութը» վերաճում է «գերդաստանի, ապա՝ ժողովրդի կյանքի պատմության» [2]:

Հ. Ասատուրյանի արձակը խմորվում է վերհուշից. նա խոսում է տարագիր հայի դեգերումներից, նկարագրում օտար և անհյուրընկալ երկրում վերագտնելու իր ազնիվ ճիգերը: Եղեռնից փրկված Հ. Ասատուրյանի հիշողություններում մնացել էին «15-ից 18 կամրջող տարիները», երբ «331 հոգիանոց խումբէն ողջ թողուցին միայն 29 հոգի», որոնցից մեկը հեղինակն ինքն էր: Եռագրության առաջին մասում գրողը հյուսում է իր մանկության գյուղի հեքիաթը. պարզ ու անմիջական, աշխատանքի հանդեպ բացառիկ նվիրում ունեցող չոմախլուեցին «Ճիշտ իր պորտին պես, հարազատ կապերով ամուր կապված» էր գյուղին: Հ. Ասատուրյանը ասելիքը վերարտադրում է տարբեր ոճային երանգներով. մերթ պատմում է առաջին դեմքով, մերթ նկարագրում, մերթ ներկայացնում, իսկ խոսքի մեջ իշխողը պարզությունն ու մտերմիկ շնչառությունն են: Գրքի գլուխներից մեկը վերնագրված է «Մեր գյուղը. ահա իր գյուղը, որի գարունները չէին գար առանց «էլիպսենք աղբյուրի գլխուն ցուլերու կռվին, և Զատիկ՝ առանց գունավոր հավկիթներու»: Գյուղի բարքերը, հարազատների պատկերները տարիների հեռավո-

³⁷ ³⁷ Հոդվածն ընդունվել է 25.12.17:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը:

րությունից «տարտամ ստվերի մը պես» կրնակալոխ հետևում են գրողին, և երբ վերջինս փորձում է մոտենալ նրանց, մշուշվում է պատկերը, իսկ հեռանալուց «քայլերուդ կհետևի, լո ու, տխո՛ւր, համա՛ռ»[3], - գրում է Հ. Ասատուրյանը:

Եվ հոգու պարտքի գիտակցումով հայրենի Չոմախլուի կյանքն է կորագծում Հ. Ասատուրյանը, տարեգրում Հովակիմի որդիների, թոռների ու թոռնորդիների կյանքը: Հովակիմի պապերը շենացնում էին իրենց երկիրը, բայց բնիկ հողերից հեռանալով նրանք ստիպված ընտրեցին «հողի ուրիշ շերտ մը»: Անցնում են ժամանակները, և նրանք նույն ջերմությունն ու սերն են դնում հողի մեջ, հարազատանում նոր տանը, հին Շամախիի օրինակով նոր գյուղին տալիս Չոմախլու անունը: «Լավ գյուղ էր մեր գյուղը» տողի կրկնությամբ հեղինակը հոգում ահագնացող ցավն է շեփոհում: Ու չնայած գյուղի հիմը ծուռ դրված էր «Քել Մելքոնին շարած պատերի» պես, բայց գրողի հոգում ծվարած կարոտը հանգիստ չէր տալիս և շատերի պես «իրենց դառը ներկայեն դեպի անուշ մանկություն կամուրջ նետելու ատեն, բավականացան ու բավարարվեցան՝ միայն իրենց ավերակ գյուղերուն և այդ անցյալին բարբերն ու դեպքերը ոգեկոչելով»[4]:

Իր գյուղը ճանաչելու համար, նկատում է արձակագիրը, պետք է լինել այնտեղ, առնվազն հանդիպել բակում հարևանուհու հետ խոսքի բռնված մորը: Իսկ ո՞ւր է գյուղը. «Ղուբ անշուշտ չեք տեսած 2. Գյուղը ու թերևս ուզեք գիտնալ, թե հիմա՛ ուր է ան. Գլխուն անանկ գարկին, որ գյուղը ինքն ալ չի գիտեր, թե ո՞ւր է հիմա... Բայց, է՛ր երբեմն»[5]:

Արձակագիրը կարոտ ունի, բայց այդ կարոտը չի պարտադրում իդեալականացնել գյուղը, մարդկանց, նրանց հոգնաշխատ առօրյան: Ճիշտ է այգիներն առատ բերք ու բարիք էին տալիս, հացառատ էր գյուղացու մառանը, կարասը լեցուն «արև-բարևե հյուրերով, բայց Օսմանյան «մշտաճարավ պետությունը» խլում էր այն գյուղացուց: Ո՞րն է ճակատի քրտինքով հաց քամող գյուղացու երջանկությունը. Հ. Ասատուրյանի հերոսներից ծերունի Տեր Սարգսի խոսքն այս առումով փիլիսոփայական մեծ խորհուրդ ունի. «Աղքատին երջանկությունը՝ անծրաներեն ետք կազմված ծիածանի պես բան մըն է, խուսափուկ, որ կա ու չկա...»[6]:

Եվ սա թերևս այն միակ պատճառն է, որ գյուղից շատ երիտասարդներ բռնում էին պանդխտության ճանապարհը: Խռչա Ղային՝ բարի, հարուստ կենսափորձ ունեցող ծերունին, նամակ է ուղարկում դարիպության մեկնած որդուն: Կարոտ կա հոր խոսքի մեջ, բայց կա նաև ներքին ուրախություն, որ որդին հեռու է երկրում իշխող կառավարության «օսմանյան մշտաճարավ պետությանն» կամայականություններից: Թուրքի ցեղային տեսակի ցայտուն օրինակը շեշտվում է հերոսներից մեկի խոսքում՝ «Թուրք է, տղաս, ուրիշին ցանածը հնծելուն միայն կհավատա: Աստված թուրքը ստեղծեր է, որ աշխարհի երեսեն վայրենությունը չվերանա... և աղեկ ժողովուրդներուն տարբերությունը տեսնվի»[7]:

Եվ փոքրիկ Ջատիկի՝ հայերն «ատանկ չե՞ն» հարցին տատը պատասխանում է. «- 2է, յավրուս, մեր ժողովուրդը ուրիշ է, անոր մատները իր հոգին պես, միշտ կանաչ են, քարեն հաց կհանեն ան և գողության, ավազակության աչք չունի բնավ. իր ցանածը միայն կհնծե»[8]:

Ահա այս գյուղում, որը գտնվում էր «եզան կոտոշին վրա նստող սա մեր երկրագունդին ծուռ կողմը», «օր ու օրացույց» չունեցող Հովակիմի գերդաստանն էր ապրում, ում հարկի տակ յոթ աղջիկներից հետո մանչ է ծնվում՝ ուրախությամբ լցնելով փոքրիկ տնակը. «Ո՛չ երկինքը երկնեց, ո՛չ ալ երկիրը լսեց ճիշդ՝ երբ Հովակիմի որդի Հովհան-

նեսի ախոռ-սաքունն, անբոց պատանեկիկ մը, զիլ ծայնով, ինքն իր գալուստը ավա-
չեց»[9]:

Ընտանիքի նախապապի անունով նորածնին Հարություն կնքեցին, և քահանան
հանեց գյուղի «մայր տունարդե՝ արծանագրելու Հովակիմի վերջին թոռան անունը:
Նրա երագները հետագայում երգ պիտի դառնային, երգից էլ ծնվում է «ի՞նչ է հայրենի-
քըն հարցը: Այլ պատասխան բանածնել չկարողանալով՝ Հովակիմի թոռը պիտի նկա-
տի, որ «Հայրենիքը, իշդ», Հայրենիք է- ո՛չ ավել, ո՛չ պակաս...»[10]: Եվ միայն տարի-
ներ հետո պետք է հասկանա, որ այն մագաղաթ բուրող սուրբ նշխար է, Մեսրոպ Մաշ-
տոց, Գրիգոր Նարեկացի և «Ցասման Ծուռ»:

Կապրեր գյուղը, կարարեր գյուղացին, Հովակիմի օջախը շեն կդարձներ այս մա-
նուկը, եթե «1915-ի փոթորկոտ երկինքներուն «փառքըն իր գլխուն չմաղեին... » [11]:
Եղեռնը մղեղի պես «անապատի չորս հովերուն» է ցրում նաև Չոմախլու գյուղի բնա-
կիչներին: Վեպի երեք մասերում՝ «Մեր գյուղը», «Անապատի կողմն աշխարհի», «Արա-
բական գիշերներ», հեղինակը լուսանկարչական ճշգրտությամբ գծում է գյուղի և նրա
ստեղծարար բնակչի կյանքը, բարքերը, կենցաղը, հողի և աշխատանքի հանդեպ բա-
ցառիկ նվիրումը, ապա աքսորի ճանապարհները, կորուստների ցավն ու Պոսեյրա ա-
րաբական գյուղում վերագտնելու ճիգերը: Արծակագիրը «կիսադար մը ետքը» գրիչ-
շերտիկով փորձում է եղեռնի «կաթսային շոգիացող ահավոր պարունակությունը խառ-
նել» և արծանագրել գյուղն իրենց հետ անապատ փոխադրող մարդկանց «տխուր
տարեգրություն»-ը: Եվ ավելին, «...ուզեցի արծանագրել, ապրի՛լ ուզող, կամ, հակա-
ռակ պարագային, զոնե **հայ մեռնիլ ուզող** (ընդգծումը մերն է-Ն. Դ.) խոնարհ հոգիներու
վերջին իղծերը և հնամյա ժողովրդի մը առհավական իմաստութենեն բխող զարմանա-
լիորեն խորունկ մտորումները» [12]:

Անապատը «մե ըհապան՝ ողջունի խոսք է հղում «մրջյուններու պոչ բռնող կարա-
վան»-ին, որ եկել էր «Ռուբենի խրոխտ երկրենե, նրանք Տիգրանի թոռնորդիներն են,
Մեծն Տիգրանի, անապտին ասես հիշեցնել է փորձում հայր, ով Քրիստոսից առաջ իր
«հուժկու թևերուն ու լայն թեզանիքին հովանին տարածեց Պոնտոսեն մինչև Իսրայել»
[13]:

Վեպում հեղինակը համեմատության հարթության վրա է դնում թուրք և արաբ ժո-
ղովուրդներին՝ գտնելով, որ թուրքը «երբեք չէր կրցած կարիճի մը աննպատակ կեր-
պով խայթելու բնագոյն վեր բարձրանալ» [14], իսկ արաբը անկյուն տվեց շոգից, սո-
վից թուլացած Հովակիմի թոռներին (Հովակիմի թոռներ կապակցությունը հոմանիշ է
հայ բառին): Պատանի Հարությունը ականատես է և իր մաշկի վրա կրում է տառա-
պանքները, մաքառում շատերի պես ապրելու համար: Կյանքը դուրս էր եկել իր բնա-
կան հոլովույթից, ամենուր մահվան մղջավանջային ներկայությունն էր, անոթի ու որբ
երեխաներն էին թափառում աննպատակ տարօրինակ, մեծ գլուխներով, ջուր ու
սնունդ հայցող հայացքներով, իսկ կանայք անծանոթ բույսերով սնվելուց ուռած «ծոց-
վորածե փորեր ունեին, ծոցվորված էին «Մեծ Եղեռնի հավիտենական երկունքով»
[15], - ցավով արծանագրում է հեղինակը՝ թախծապարար ելևէջներով վավերագրում
հայ մայրերի տառապանքները: Աշխարհն անգամ խռովեց Աստծուց, բայց հայոց մայ-
րերի աղոթասաց շուրթերը շարունակում էին որդիների փրկությունն աղերսել: Եվ
միայն կյանքից դառնացած Վարդուհին ցատումի շեշտադրումով իր նորովի աղոթքն է
ուղղում Բարձրալին. «Հայր մեր որ հերկինս ես եղեր...աղե՛կ, որ երկինքն ես: Ի՛նչ
գործ ունենայիր սա փոշիներուն մեջ...» [16]:

Անհաշտ էր Աստծո հետ նաև Օհան Քեհյան, ով գտնուում է, որ Քրիստոս խաչվեց իր օրերի ժողովրդի մեղքի համար, իսկ «Մեկի դեմ հիմա հարյուրներով կին ու երեխա ասանկ խաչել կըլլա՞ եղբր: Ի՞նչ է ասոնց մեղքը... » 17]: Նրան հետևում է Վարժապետի ցատումը, ով քարսիրտ աշխարհին որպես հիշեցում վկայակոչում է մեր հնամյա պատմության էջերը. «Այս ի՞նչ տեսակ աշխարհի է, որ մեզի պես երեք հազարամյա արժանավոր ազգ մը, ասանկ, չոլերը նետեց» 18]: Ահա մահամերձ Թովմասը, նրա վերջին ցանկությունն էր մեռնելու պահին գլուխը «ադ շան երկրին... ադ թուրքին կողմը... չըլլա՛...ե, այլ միայն Մասիսի կողմը: Ծերունին թոռանը պահ է տալիս տան ժանգոտ բանալին, որով պիտի օրորե հայրենի տուն դառնալու հույսը:

Հ. Ասատուրյանին հաջողվել է վարպետ գրչով, մեկ բառով, երբեմն նաև երգիծախառը բառախաղով՝ «քուրջի... և անուրջի կտորվանքե, «հույսն ալ կհոգներ հուսալենե, պատկերել մարդկային կյանքի մի ամբողջ ողբերգություն և հասնել ընդհանրացման: Փլուզվում է նաև հեղինակի մոր հավատքը, որովհետև մեկիկ-մեկիկ կորցրեց դուստրերին: Նա որդուն հարցնում է, եթե Հիսուսը հայերեն չգիտեր, ինչպես գրվեց ավետարանը, լսելով պատասխանը, մայրը դառնացած բացականչում է՝ «Հիմա հասկացա, թե ինչո՞ւ ասքան ատեն մեզի հասկցող չեղավ» [19]: Աստծո, աղոթքի տանող կամուրջները թվում էր՝ փլուզվել են անդարձ, բայց մի վերջին պահի մայրը կրկին ձեռքն է առնում աղոթագիրքը: Առանձին գուրգուրանքով, արցունքներով և «սրտի տևական սեղմումներով գրողը գծում է մոր կերպարը, ում կյանքը «տևական զոհողության մարմնացում մը»-ն էր, ով հրաժարվում էր կտոր հացից, որպեսզի որդին ավելի «կուշտե լինի: Իր մեռնող ցեղին մոխիրներից փյունիկելու պատգամի ուժ ունի մոր վերջին պահանջը. «-Դու՛ն, կեր այդ հացը, որ ապրիս... դուն պե՛տք է, որ ապրիս, հասկցա՞ր: Այս ընդհանուր փլուզումին մեջ դուն դեռ կանգուն՝ միա՛կ ճրագն ես Օվակիմին տան, հասկցա՞ր...» [20]:

Մայրը համակ բարություն էր, «Հայոց պատմությունն էր՝ իր վիրավոր էջերեն խոսող» [21],- ընդհանրացնում է հեղինակը: Մեռնելուց առաջ հոգեկան խռովքի մեջ էր, ճիշտ էր արդյոք արել դատերը՝ Սրբուհուն փաշային չվաճառելու համար, ողջ կմնար, բայց գուցե և իր ամբողջ կյանքում անիծեր մորը: Միայն մի պահ, հաջորդ վայրկյանին արդեն հոգին խաղաղվում է. ազատության մեջ մեռնելը նախընտրելի է ստրկացված ապրելուց: Մեռնում է նաև մայրը, և որդին նրա անշնչացած մարմինը նետում է Ահարոնի ամենակույ հորը: Մարմինը, վիրապի քարե շուրթերին զարնվելով, ընկնում է «Մեծ Եղեռնի քրքջացող երախին մեջ... » [22]:

Զոմախլուից Պոսեյրա հասած աքսորականներից մահվան մանգաղից ճողոպրել հաջողվում է միայն 29-ին. նրանք հասնում են Թֆիլե, ապրում նկուղներում: Հովակիմի թոռը, որ որբ լինել բնավ չէր ցանկանում, շատ որբերի պես դառնում է ժառանգավորացի աշակերտ, ու հոգին լցվում է անբացատրելի ապրումներով, երբ «ամբողջ կյանք մը փակ մնացած այբուբենի գանձարանինն դռները նորից բացվում են իր առջև, որպեսզի «քառասունչորս տարիներու սա տարտամ հեռավորությունեն գրի առնի «որդեկորույս կռունկներու պես իր հայրենական հուշերը:

Այս սերունդը կորցրեց ամեն ինչ, բացի սրբությունից, հավատարիմ մնաց իր ծառուհին, չաղարտեց նկարագիրը հայի, հոգում պահեց խիղճն ու արցունքները:

Եռագրության երկրորդ գիրքը՝ «Հովակիմի թոռնորդիները, շարունակում է առաջին վեպին, անհայրենիք մնացած սերնդի տարեգրությունը հյուսվում է նոր միջավայրում: Երկրորդ վեպում ևս առանցքային է հայ մարդու ձակատագրի թեման՝ ազգային արժեքների կորուստների ենթաշերտերով: Գիրքը հեղինակի ընդվզումն է նահանջի

դեմ: Գրողը անվանափոխում է հերոսներին. Լևոնը, կարելի է ասել, նույն Հարությունն է, ով այլևս ամերիկացի է: Մեծ ու մարդակուլ քաղաքն իր քաղաքակրթությամբ, ապրուստի միջոց փնտրելու ամենօրյա հոգսը քայլ առ քայլ խլում են ազգային ոգին, կործանում նկարագիրներ, ինչի հետ անհաշտ էր Լևոնը: Նա հեղինակի գաղափարական կրկնօրինակն է, ով նույնպես անհաշտ էր ինքնություն կորցնող հայ մարդու՝ նահանջողների հետ: Լևոնի հայացքները՝ ազգայինից ածանցված, դառնում են անընդմեջ վեճերի պատճառ, որոնք վեպում էջեր են լրացնում, ինչը, նկատում է գրականագետ Ս. Դանիելյանը. «վեպը գրկում են գեղարվեստական հմայքից, այն դարձնում չոր, հրապարակախոսական աքսիոմաների հանրագումար» [23]:

Ամերիկյան բարքերը խարխուլում են ազգային դիմագիծը. Լևոնը, Շ. Շահնուրի Սուրենի պես, ի վերջո գնում է գիտակից նահանջի: Լևոնին որդու ուսուցչուհին երկտող է ուղարկում, որտեղ հանդիմանում է տանը «օտարե» մայրենի, լեզվով խոսելու համար, ինչը խանգարում է որդու առաջադիմությանը. օտարոտի շեշտի պատճառով տղան կորցնում է խոսքի «մաքրությունը»: Գերիվար նահանջ էր, պայքարողներն անկարող էին պատմեցի վրա մնալ և «գիտությամբ, թե անգիտությամբ, կամա, թե ակամա» (Շ. Շահնուր) գնում են դեպի ուժացում, հաղթանակը ուսուցչուհու կողմն էր: «Հին, հպարտ հայե-ի՝ Լևոնի ընտանիքում ևս քայլ առ քայլ իրենց դիրքերն են փոխում մայրենին ու անգլերենը, հայերենը դառնում է այլևս օտար լեզու. «Հայերեն բառերը տղոց բերնին մեջ հետգիետե դալկացան և ձևազերծվեցան: Եվ օր մըն ալ պատահեցավ անխուսափելին... Հայերենը տունեն դո՛ւրս ինկավ» [24]:

Իսկ երբ Հովակիմի թոռնորդին նախընտրում է ամուսնանալ այլազգի դասընկերուհու հետ, վերջնականապես խարխուլվում է հոր հոգեկան բերդի պարիսպները՝ առաջացնելով բաբելոնյան խառնակություն, որից ազգային բարքերին ամուր թելերով կապված հայրերի և նոր՝ ամերիկյան բարքերն արագ սեփականող որդիների միջև անհասկացվածության խոր ակոս է գծվում: Ոգին, նկարագիրը տարիների հետ կորցնում են իրենց ուժը նաև Լևոնի գաղափարական ընկերների՝ Հրաչի, Վահանի, Տրդատի, կնոջ՝ Ազնեսի մեջ. վերջինս նկատում է, որ նոր սերունդը մնան է որսորդի տան պատից կախված որսի մորթու, որոնց մեջ չկա միս ու ոսկոր. «Քանի մը սերունդ հետո ա՛յո է, որ պիտի մնա... տոհմային ինքնութենե պարպված մորթի» [25]: Եվ նույն Ազնեսն է, որ նկատում է. օտարության մեջ ապրող հայի խարխիսը պետք է լինի մայր հայրենիքը, որովհետև «Առանց հայրենիքի ավիշին, բոլորս, ուշ թե կանուխ, պիտի խամրինք: Հո՛ն է տևականացումի մը գաղտնիքը» [26]:

Լինելով նոր միջավայրի ծնունդ՝ Հովակիմի թոռնորդիները, բնականաբար, կառաջած չեն արժեքներից, շատերը պայքարի փորձ անգամ չեն կատարում. նրանցը միայն արյան բաղադրությունն է: Ե՛վ երկիրը Նաիրի, և՛ խորհրդային դրոշներով փողփողացող հայրենիքը նրանց համար սոսկ պատմության էջերից դյուցազնորեն «ժպտացող ռիստավայրի է վերածվում: Ներքին լավատեսությամբ հեղինակը դեռ հավատում է ազգի հարատևության խորհրդին. իր կոտորակված ազգը «դուրս եկած է միշտ ադամանդի կարծրությամբ,- գրում է նա, ապա. «...հին բազմաթիվ ժողովուրդներու հետ՝ պատմութեան խորերեն միասին ճամփա ելնելէ ետք, մինչ անոնք կես ճամփուն մնացին պատմութեան գլանին տակ և կորան հավետ, մեր ժողովուրդը, միևնույն գլանին տակեն անցնելէ հետո, իր գլուխը կրկին ու կրկին վեր առած, դեռ կշարունակե իր երթը դեպի փայլուն ապագա» [27] (ընդգծումը մերն է-Ն. Դ.):

Հ. Ասատուրյանը նկատում է, որ կա դեռ «ընտիր կորիզ մը հայ երիտասարդությանե, ովքեր հայությունից օտարվել պարտադրող փոթորիկներին դիմադարձ կկանգ-

նեն. «Ազգին նալը ձեր կարծածին չափ շուտ պիտի չընկղմի բարեբախտաբարե[28],- նկատում է արծակագիրը:

Եռապատումի երրորդ գիրքը՝ «So՛, լա՛ճ տնաւերե, ընթերցողի սեղանին դրվեց 1986-ին՝ Նյու Յորքում: «Ուղեկորավեպ» - այսպես է բնութագրել գիրքը Հ. Ասատուրյանը: Հերոսները՝ Կարապետն ու Տիգրանուհին, ամերիկացիներ են, հայրենիք են վերադառնում որպես ուխտավորներ: Հին Չոմախլուն այլևս Տեվալլուն էր, ուր անհնարին էր գտնել հին հիշատակները, ոչինչ հայկականությունից, անդարձ կորսված էր ամեն ինչ, ուստի հերոսներին մնում էր ծխացող հուշը: Հայրական օջախում բնավորվել էր թուրքը. նրանց համար չկա անցյալը, կա միայն ներկան, ուստի նրանց խորթ էր անծանոթ այցելուների ապրումները, հոգում անթեղված, ցավից ու կարոտից ծնված ճիչը: Վեպի ուշագրավ տեսարաններից է եկեղեցու փլուզումը. հիսուն տարի լռությունից հետո անասնագործի վերածված եկեղեցու պատերից ներս պատարագ է մատուցվում, քսանհինգ թույն անց այն փլուզվում է: Թվում է՝ հոգևոր աղոթատեղին ևս կարոտ ուներ իրական տերերի աղոթքի, ահա ինչու հայի հավատքը բերող եկեղեցին փլուզվում է ուխտավոր հայի՝ վերջին այցելուի աղոթքից անմիջապես հետո:

զրքում անցյալը հառնում է ներկայի պատուհանից, հեղինակի հուշերից, որպես հոգու խճանկար, որպես տեսիլք, և երբ օդում անխնայ է պատրանքը, մնում է ներկան, իրականը՝ Հասանը, Նուրի Օսմանը: Նրանք թուրք են գենետիկական իրենց կողով, ընդունակ միայն լլկելու, հափշտակելու. Հասանին միմիայն հետաքրքրում էր էրգրի տերերի թաքցրած գանձերը և լկտիաբար առաջարկում է կիսել դրանք՝ խաղալով հայրենիքից դատարկված հայի վշտի հետ: Իսկ Օսմանը, ով առանձնանում է ավարառու և գիշատիչ իր էությանը, առանձին ոգևորությամբ է պալ՝ՍáđՍ հայուհիներին բռնաբարելու գազրելի պատմությունները: Բայց, նկատում է արծակագիրը, թուրքերի մեջ նույնպես կան ազնիվ տիպարներ. ջրաղացպանը առանձնանում է իր բարությամբ, սիրով հիշում այն ժամանակները, երբ հայի հետ դրացիության «ջերմ» կապերով էր կապված: Թրքուհին Վանի ոսկե խաչը վերադարձնում է հայկական եկեղեցուն:

Հ. Ասատուրյանի երեք գրքերում գաղափարական շեշտված հարցադրումները լեզվի նահանջի, ինքնության պահպանման խնդիրներն են: Երեք գրքերում գրողը պայքարի կոչ է անում: Հեղինակը պատրաստ է պայքարել, պատենշի վրա մնալ մինչև անգամ եթե 99 տոկոսն այլևս հայատառ գիրք կամ թերթ չի կարդում՝ «ան կը յամառի գրել մնացած մէ՛կ տոկոսին համարե[29] (գրողի խոսքն ուղղված է Լևոն-Զավեն Սյուրմենյանին) և երբեք դառնալ օտարագիր: Սա պատասխան է նաև գրչընկերոջ՝ Վահե Հայկի՝ չհասկացվածության մտավախությունից ծնված հարցադրումի՝ «Կամ որո՞ւ եւ ո՞ւր պիտի երթայ ծովսը իր ծխանին երբ գաւակը անկարող կը մնայ իր հօրը գործերը կարդալու... » [30]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, Եր., 1967, էջ 331:
2. Նույն տեղում:
3. Ասատուրյան Հ., Հովակիմի թոռները, Եր., 1974, էջ 8:
4. Նույն տեղում, էջ 153:
5. Նույն տեղում, էջ 17-18:
6. Նույն տեղում, էջ 63:

7. Նույն տեղում, էջ 49:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 55:
10. Նույն տեղում, էջ 103:
11. Նույն տեղում, էջ 51:
12. Նույն տեղում, էջ 154:
13. Նույն տեղում, էջ 223:
14. Նույն տեղում, էջ 194:
15. Նույն տեղում, էջ 242:
16. Նույն տեղում, էջ 199:
17. Նույն տեղում, էջ 207:
18. Նույն տեղում, էջ 226:
19. Նույն տեղում, էջ 314:
20. Նույն տեղում, էջ 311:
21. Նույն տեղում, էջ 329:
22. Նույն տեղում, էջ 333:
23. Դանիէլեան Ս., Ամերիկահայ վիպագիրներ, Հայաստան, 1990, էջ 91:
24. Ասատուրեան Յ., Յովակիմի թոռնորդիները, Պէյրութ, 1982, էջ 122:
25. Նույն տեղում, էջ 114:
26. Նույն տեղում, էջ 207:
27. Նույն տեղում, էջ 139-140:
28. Նույն տեղում, էջ 201:
29. Ասատուրեան Յ., Տօ՛ւ լա՛ճ տնաւեր, Նիւ Եորք, 1986, էջ 8:
30. Վահէ Հ., Հայրենի ծխան /պատմութիւններ եւ պատկերներ, Ե. հատոր, Պէյրութ, 1970, էջ 7:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հակոբ Ասատուրյան. Դիմագիծ և հատկանիշներ Նոնա Դավթյան

Հակոբ Ասատուրյանը մեկն է այն արձակագիրներից, ովքեր եղեմնից հետո փորձեցին վերագտնել իրենց օտար ու անհյուրընկալ ափերում՝ հոգում պահելով կորցրած հայրենիքի հուշը: Նրանք են նաև փորձել փրկել, հարություն տալ կորուսյալ գյուղի պատկերները: Հոգվածը արձակագրի դիմագծի և գրական ժառանգության վերլուծության փորձ է:

РЕЗЮМЕ

Акоп Асатурян: черты и особенности Нона Давтян

Ключевые слова: летопись, трилогия, литература Тоски, воспоминание, отступление от языка, национальный образ, боль потерь, идеологическая постановка вопроса.

Акоп Асатурян является одним из тех прозаиков, которые после геноцида пытались найти себя на чужих и негостеприимных берегах, в душе сохранив воспоминание о

потерянной родине. Именно они стремились спасти, возродить образы потерянной деревни. Статья является попыткой анализа жизни и литературного наследия прозаика.

SUMMARY

Hakob Asaturyan. Image and character

Nona Davtyan

Keywords: chronicle, trilogy, the literature of Longing, a memory, a departure from the language, national image, the pain of loss, the ideological formulation of the question.

Hakob Asaturyan is one of those writers who, after the genocide tried to find himself in strange and inhospitable shores, keeping in soul the memory of their lost homeland. They sought to save, to revive the images of the lost villages. The article is an attempt to analyze the life and literary heritage of the writer.